

Հաստատված է

Ոսկերաս համայնքի ավագանու

10.11.2016 թ. N որոշումով

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ
ՄԱՐԶԻ ՈՍԿԵԹԱՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2017-2021թթ
ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ**

Բովանդակություն

1. Համայնքի ղեկավարի ողջույնի խոսք.....	3
2. Համայնքի իրավիճակի նկարագրություն	4
2.1. Համայնքի ընդհանուր նկարագրություն	4
2.2. Համայնքի սոցիալ տնտեսական իրավիճակը.....	5
2.3. Համայնքում իրականացվող ծրագրերը.....	6
2.4. Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումները	7-10
2.5. Զարգացման խոչընդոտներ և դժվարություններ	Ошибка! Закладка не определена.
2.6. Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈւԹՀՍ) վերլուծություն	11-12
3. Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում Ошибка! Закладка не определена.	
3.1. Համայնքի զարգացման տեսլական	12
3.2. Համայնքի զարգացման անմիջական նպատակներ	Ошибка! Закладка не определена. 13-14
4. ՀՀԶԾ ֆինանսավորում	15
5. ՀՀԶԾ մոնիթորինգ Ошибка! Закладка не определена.	

Հարգելի հայրենակիցներ
ՀՀ Արագածոտնի մարզի Ոսկեթասի համայնքապետարանը նախկին քառամյա ծրագրի շրջանակներում կատարել է իր վրա դրված պարտավորությունները, որոնց ականատեսն եք եղել դուք և իրազեկվել եք համայնքի ավագանու որոշումներով, բյուջեի եռամսյա հաշվետվություններով: Սակայն ծրագիրը բավարար չէր բնակչության բարեկեցության բարձրացման և համայնքին կայուն զարգացում ապահովելու համար: Այդ պատճառով հաշվի առնելով հանրային բաց լսումներում ձեր առաջարկությունները, համայնքի սոցիալ տնտեսական իրավիճակը, առկա հիմնախնդիրները, տնտեսական, ֆինանսական, բնական ու մարդկային ռեսուրսները, դրանք քննարկելով համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմինների և ավագանու համատեղ նիստերում, համայնքի ավագանու կողմից ընդունվել է ՀՀ Արագածոտնի մարզի Ոսկեթաս համայնքի հնգամյա(2017 – 2021 թթ.)զարգացմանծրագիրը(ՀՀԶԾԾրագիր):
Ծրագրի հիմնական ուղղություններն են

1. Գերեզմանոցի տարածքի պարսպապատում
2. Զոհվածների հուշարձանի վերանորոգում
3. Համայնքապետարանի շենքի վերանորոգում
4. Համայնքի ներհամայնքային ճանապարհների ասֆալտապատում և կապիտալ նորոգում
5. Ոռոգման համակարգի ջրագծերի կառուցում և կապիտալ վերանորոգում
6. Համայնքի ներհամայնքային փողոցների լուսավորության անցկացում
7. Համայնքի գազաֆիկացում
8. Գյուղատնտեսական տեխնիկայի ձեռքբերում

Այս ծրագրի գերակա ոլորտներն են.
1. Ազգաբնակչության կենցաղի բարելավում
2. Զբոսաշրջության զարգացում
3. Գյուղատնտեսության զարգացում

Համայնքի հիմնախնդիրների ցանկը կարելի է շարունակել, սակայն, ակնհայտ է, որ քառամյա ժամանակահատվածում անհնար է լուծում տալ համայնքում առկա բոլոր հիմնախնդիրներին: Վերևում թվարկված հիմնախնդիրներից անհրաժեշտ է առանձնացնել նրանք, որոնց լուծումն, իրատեսականության տեսանկյունից, նպատակահարմար է ներառել համայնքի 2017-21թթ. ՀՀԶԾ-ում՝ ելնելով համայնքի ռեսուրսային հնարավորություններից և

համայնքի հետագա զարգացման՝ ՏԻՄ-երի ընտրած ռազմավարությունից և սահմանած հիմնական նպատակներից:

Սակայն ծրագրերի իրականացման համար առկա են բազմաթիվ խոչնդոտներ.

1. Համայնքի բյուջեում սեփական եկամուտների փոքր բաժին
2. Բնակլիմայական պայմաններ
3. Գյուղատնտեսության ապահովագրության բացակայություն
4. Ներդրումների բացակայություն

2. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2.1 ՀԱՄԱՅՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ոսկեթաս՝ Ղուղարվեշ գյուղը հիմնադրվել է 1915 թվականին: Գյուղի բնակչության նախնիների մի մասը եկել են Մուշի եւ Սասունի գավառներից::

Գյուղը գտնվում է ծովի մակերևույթից 2150մ բարձրության վրա: Գյուղի կլիման չափավոր ցամաքային է: Ձմեռները ցուրտ են, հաստատուն ձնածածկույթով: Ամառները զով են: Գյուղում հաճախակի են չորային տարիները, որից հիմնականում տուժում են գյուղատնտեսական աշխատանքները:

Համայնքի վարչական տարածքը կազմում է 1506.4 հա, հեռավորությունը մայրաքաղաքից՝85 կմ, մարզկենտրոնից՝65 կմ, տարածաշրջանային կենտրոնից՝ 8 կմ: Համայնքն իր վարչական սահմաններով սահմանակից է Կարմրաշեն, Զովասար, Մաստարա , Ակունք գյուղական համայնքներին:

1.1 ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Համայնքի բնակչության թիվը կազմում է 605մարդ, այդ թվում տղամարդիկ՝ 300 և կանայք՝ 305: Բնակչության տարիքային և սոցիալական կազմն այսպիսին է՝

- 0-6 տարեկան -31մարդ
- 7-17 տարեկան – 98մարդ
- 18-63 տարեկան – 380 մարդ
- 64 և ավելի տարեկան 96 մարդ
- կենսաթոշակառուների թիվը – 82 այդ թվում տարիքային և աշխատանքային թոշակառուներ 46 մարդ, մանկուց հաշմանդամներ՝ 2 մարդ
- հաշմանդամներ - 12 մարդ

- միակողմանի ծնողագուրկ երեխաներ – 5մարդ
- աշխատունակներ – 380 մարդ
- զբաղվածներ – 42 մարդ
- գործազուրկներ – 338 մարդ
- տնային տնտեսությունների թիվը – 110
- ընտանիքների թիվը - 147
- ընտանեկան նպաստի համակարգում հաշվառված ընտանիքների թիվը – 22, այդ թվում նպաստառու ընտանիքների թիվը – 18:

2.2 ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ

Համայնքում կան 380 աշխատունակ մարդիկ, որոնցից աշխատանքով զբաղված են 46-ը, մնացած 334-ն աշխատանք չունեն։ Սակայն վերջիններս չեն կարող գրանցվել Թալինի տարածաշրջանային զբաղվածության կենտրոնում որպես գործազուրկներ, քանի որ համայնքի բնակիչները հիմնականում հողերի սեփականատերեր են և, ՀՀ օրենսդրության համաձայն, չեն կարող համարվել գործազուրկ։

Համայնքի մոտ 110 ընտանիքներից 25-ը հաշվառված են ընտանեկան նպաստի պետական համակարգում, որոնցից սոցիալապես անապահովության նպաստառուներ են գնահատվել 23 ընտանիքները (ընդհանուրի 21.0%-ը)։ Համայնքում բնակվում են նաև մոտ 13 հաշմանդամ և միակողմանի ծնողագուրկ 15 երեխա։

Համայնքի բնակիչներին շոշափելի սոցիալական ծառայություններ մատուցվում են հիմնականում Թալինի տարածաշրջանային ՄՕՏԳ-ի, գյուղապետարանի և ,Վորլդ Վիժն - Հայաստան կազմակերպության Թալինի տարածաշրջանային գրասենյակի կողմից։

2.3. ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾՐԱԳՐԵՐԸ

Համայնքում պետության կողմից ներդրումներ ապահովելու նպատակով, նախատեսվում է սերտ համագործակցություն ՀՀ Արագածոտնի մարզպետարանի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների հետ: Որպես պետական կառավարման մարմինների հետ համայնքի համագործակցության հիմնական ուղղություններ, 2017-21թթ. նախատեսվում են հետևյալ հանրապետական և մարզային ծրագրերն ու միջոցառումները՝

- համայնքում գյուղատնտեսության զարգացում՝ պարարտանյութերի, թունաքիմիկատի, սերմացուի, գյուղտեխնիկայի ձեռքբերման, գյուղացուն ձեռնտու պայմաններով (երկարաժամկետ, շուկայականից ցածր տոկոսադրույքով, առանց գրավի) գյուղատնտեսական վարկերի տրամադրման, գյուղատնտեսական աշխատանքների կազմակերպման, խորհրդատվության ու աջակցության և այլ ուղղություններով,
- համայնքային նոր կենտրոնի կառուցում և ջեռուցում, որի շահագործմամբ հնարավորություն կստեղծվի նոր տարածք տեղափոխել համայնքի գյուղապետարանը և գրադարանը՝ նոր մակարդակի բարձրացնելով այդ հիմնարկների գործունեությունը, համայնքի բնակիչների մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը,
- համայնքի միջնակարգ դպրոցի շենքի ընթացիկ նորոգում, ներքին հարդարում, դռների և պատուհանների փոխարինում, ջեռուցում՝ բարելավելով դպրոցական հանրակրթության որակը և ավելացնելով դպրոցում սովորողների թիվը,
- համայնքի
- գազաֆիկացում, գազամատակարարման ներհամայնքային համակարգի ստեղծում և շահագործում՝ եռակողմ համագործակցության հրավիրելով և ներգրավելով նաև <Ռուսգազարդ - Հայաստան> ՓԲԸ-անը,
- Գյումրի - Երևան մայրուղուց մինչև համայնք ճանապարհի կապիտալ նորոգում, բարեկարգում և ասֆալտապատում՝ նպաստելով համայնքում արտադրված գյուղատնտեսական մթերքները մինչև շուկա հասցնելուն և իրացնելուն,
- մարզկենտրոն Աշտարակի տարածաշրջանային կենտրոն Թալինի հետ մշտական հասարակական տրանսպորտային հաղորդակցության կազմակերպում և ապահովում՝ համագործակցության ներգրավելով մասնավոր տրանսպորտային կազմակերպությունների,
- առողջապահության և սոցիալական պաշտպանության ոլորտներում բնակչությանը հանրային ծառայությունների մատուցում՝ պետական պատվերի շրջանակներում,
- աղետների ռիսկի կառավարման ոլորտում համայնքի բնակչության լայն իրազեկում, համայնքի գործողությունների պլանի կազմում և իրականացում, կանխարգելիչ միջոցառումների կազմակերպում և իրականացում:

2017-21 թթ. ընթացքում Հայաստանում ծրագրվող վարչատարածքային բարեփոխումների և/կամ միջհամայնքային համագործակցության շրջանակներում¹ նախատեսվում են հետևյալ նպատակային ծրագրերը և միջոցառումները՝

- աղբավայրի կառուցում և շահագործում,
- աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների կազմակերպում և մատուցում,
- խմելու ջրի ջրամատակարարման ընդհանուր ջրագծի կառուցում, ներհամայնքային համակարգերի անցկացում և շահագործում,
- Թալին քաղաքի և մյուս բնակավայրերի միջև շուրջօրյա հասարակական տրանսպորտի ապահովում և շահագործում,
- այլ ծրագրեր և ծառայություններ:

2.4 ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐ

Աղյուսակ 2. Համայնքի 2015-2016թթ. բյուջեների մուտքերի ցուցանիշները և 2017-2021թթ. բյուջեների մուտքերի կանխատեսումը

Հ/հ	Մուտքերի անվանումը	հազար դրամ						
		2015թ. փաստ.	2016թ. նախատ.	2017թ. փաստ.	2018թ. նախատ.	2019թ. կանխ.	2020թ. կանխ.	2021թ. կանխ.
1	2	3	4	5	6	7	8	9
	ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՄՈՒՏՔԵՐ՝ ԸՆԴԱՄԵՆԸ (I+II+III)*	9646.7	10867.1	10864.7	9313.6	10382.	1257.7	12857.7
I.	ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ (1+2+3)*							
1.	ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ							
1.1	Գույքային հարկեր անշարժ գույքից							
	Գույքահարկ շենքերի և շինությունների համար				10.6	10.6	10.6	10.6
	Հողի հարկ	783.1	783.1	783.1	1573.1	1573.1	1573.1	1573.1
1.2	Գույքային հարկեր այլ գույքից							
	Գույքահարկ փոխադրամիջոցների համար	292.8	578.1	714.6	514.4	600.0	650	700
1.3	Ապրանքների օգտագործման կամ գործունեության իրականացման թույլտվության վճարներ							
	Տեղական տուրքեր	18.0	18.0	18.0	24.0	24.0	24	24
1.4	Ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից այլ պարտադիր վճարներ							
	Պետական տուրքեր							
1.5	Այլ հարկային եկամուտներ							
	Այլ հարկերից և պարտադիր վճարներից կատարվող մասհանումներ							
	Հողի հարկի և գույքահարկի գծով համայնքի բյուջե վճարումների բնագավառում բացահայտված հարկային օրենսդրության խախտումների համար հարկատուներից գանձվող տույժեր և տուգանքներ, որոնք չեն հաշվարկվում այդ հարկերի գումարների նկատմամբ							
2.	ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ							

2.1	Ընթացիկ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ							
2.2	Կապիտալ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ							
2.3	Ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհներ							
ա)	Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ	7953.3	9080.8	11192.4	11200	11200	11200	11200
բ)	Պետական բյուջեից տրամադրվող այլ դոտացիաներ							
գ)	Պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)	149.5	7.1					
դ)	ՀՀ այլ համայնքների բյուջեներից ընթացիկ ծախսերի ֆինանսավորման նպատակով ստացվող պաշտոնական դրամաշնորհներ							
2.4	Կապիտալ ներքին պաշտոնական դրամաշնորհներ							
ա)	Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)							
բ)	ՀՀ այլ համայնքներից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակով ստացվող պաշտոնական դրամաշնորհներ							
3.	ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ*							
3.1	Տոկոսներ							
3.2	Շահաբաժիններ							
3.3	Գույքի վարձակալությունից եկամուտներ							
	Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարներ	300.0	300.0	300	500.0	500.0	500	500
	Համայնքի վարչական տարածքում գտնվող պետական սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարներ							
	Համայնքի վարչական տարածքում գտնվող պետության և համայնքի սեփականությանը պատկանող հողամասերի կառուցապատման իրավունքի դիմաց գանձվող վարձավճարներ							
	Այլ գույքի վարձակալությունից մուտքեր							
3.4	Համայնքի բյուջեի եկամուտներ ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից, այդ թվում							
	Պետության կողմից ՏԻՄ-երին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցներ							
3.5	Վարչական գանձումներ							
	Տեղական վճարներ							
	Համայնքի վարչական տարածքում ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների օրինականացման համար վճարներ							
	Օրենքով սահմանված դեպքերում համայնքային հիմնարկների կողմից առանց տեղական տուրքի գանձման մատուցվող ծառայությունների կամ կատարվող գործողությունների դիմաց ստացվող							

	(զանձվող) վճարներ							
3.6	Մուտքեր տույժերից, տուգանքներից							
	Վարչական իրավախախտումների համար ՏԻՄ-երի կողմից պատասխանատվության միջոցների կիրառումից եկամուտներ							
	Մուտքեր համայնքի բյուջեի նկատմամբ ստանձնած պայմանագրային պարտավորությունների չկատարման դիմաց զանձվող տույժերից							
3.7	Ընթացիկ ոչ պաշտոնական դրամաշնորհներ							
3.8	Կապիտալ ոչ պաշտոնական դրամաշնորհներ							
3.9	Այլ եկամուտներ*							
	Համայնքի գույքին պատճառած վնասների փոխհատուցումից մուտքեր							
	Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումներից մուտքեր	550.0	550	0				
	Օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ համայնքի բյուջեի մուտքագրման ենթակա այլ եկամուտներ	150.0	100.0	100	100	100.0	100.0	100.0
II.	ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ (1+2+3+4)							
1.	Հիմնական միջոցների իրացումից մուտքեր							
	Անշարժ գույքի իրացումից մուտքեր							
	Շարժական գույքի իրացումից մուտքեր							
	Այլ հիմնական միջոցների իրացումից մուտքեր							
2.	Պաշարների իրացումից մուտքեր							
3.	Բարձրարժեք ակտիվների իրացումից մուտքեր							
4.	Չարտադրված ակտիվների իրացումից մուտքեր							
	Հողի իրացումից մուտքեր							
	Ոչ նյութական չարտադրված ակտիվների իրացումից մուտքեր							
III.	ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՀԱՎԵԼՈՒՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՈՒՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՄ ՊԱԿԱՍՈՒՐԻ (ԴԵՖԻՑԻՏ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ (Ա+Բ)							
Ա.	ՆԵՐՔԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ (1+2)							
1.	ՓՈԽԱՌՈՒ ՄԻՋՈՑՆԵՐ							
1.1	Արժեթղթեր							
	-թողարկումից և տեղաբաշխումից մուտքեր							
	-հիմնական գումարի մարում							
1.2	Վարկեր							
	-վարկերի ստացում							
	-ստացված վարկերի հիմնական գումարի մարում							
1.3	Փոխատվություններ							
	-բյուջետային փոխատվությունների ստացում							
	-ստացված փոխատվությունների գումարի մարում							
2.	ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ							
2.1	Բաժնետոմսեր և կապիտալում այլ մասնակցություն							
	-համայնքային սեփականության բաժնետոմսերի և կապիտալում համայնքի մասնակցության							

	իրացումից մուտքեր							
	-իրավաբանական անձանց կանոնադրական կապիտալում պետական մասնակցության, պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույքի (բացառությամբ հողերի), այդ թվում՝ անավարտ շինարարության օբյեկտների մասնավորեցումից առաջացած միջոցներից համայնքի բյուջե մասհանումից մուտքեր							
	-բաժնետոմսեր և կապիտալում այլ մասնակցություն ձեռքբերում							
2.2	Փոխատվություններ							
	-նախկինում տրամադրված փոխատվությունների դիմաց ստացվող մարումներից մուտքեր							
	-փոխատվությունների տրամադրում							
2.3	Համայնքի բյուջեի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդը							
2.4	Համայնքի բյուջեի ֆոնդային մասի ժամանակավոր ազատ միջոցների տրամադրում վարչական մաս							
2.5	Համայնքի բյուջեի ֆոնդային մասի ժամանակավոր ազատ միջոցներից վարչական մաս տրամադրված միջոցների վերադարձ ֆոնդային մաս							
2.6	Համայնքի բյուջեի հաշվում միջոցների մնացորդները հաշվետու ժամանակահատվածում							
	որից՝ ծախսերի ֆինանսավորմանը չուղղված համայնքի բյուջեի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդի գումարը							
Բ.	ԱՐՏԱՔԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ							
1.	ՓՈԽԱՌՈՒ ՄԻՋՈՑՆԵՐ							
1.1	Արժեթղթեր							
	-թողարկումից և տեղաբաշխումից մուտքեր							
	-հիմնական գումարի մարում							
1.2	Վարկեր							
	-վարկերի ստացում							
	-ստացված վարկերի հիմնական գումարի մարում							
1.3	Փոխատվություններ							
	-փոխատվությունների ստացում							
	-ստացված փոխատվությունների գումարի մարում							

*) Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե հատկացվող գումարը չի մտնում բյուջետային ընդհանուր եկամուտների մեջ

Անհրաժեշտ է նաև նկատել, որ համայնքի բյուջեն չունի մեծ ծավալի մուտքեր ո՛չ համայնքի ոչ ֆինանսական ակտիվների (հող, գույք) իրացումից և ո՛չ էլ փոխառու միջոցներից (փոխատվություն, վարկ): Սա նշանակում է, որ համայնքն իր ֆոնդային բյուջեում կարող է նախատեսել կապիտալ ծախսեր ու ծրագրեր միայն՝ համայնքի վարչական բյուջեի ծախսերը նախատեսելուց հետո ընդհանուր մուտքերի մնացորդ գումարը վարչական բյուջեի պահուստային ֆոնդի միջոցով փոխանցելով համայնքի ֆոնդային բյուջե:Այսպիսով, համայնքի տվյալ տարվա

Ֆոնդային բյուջեում կապիտալ ծախսերի չափն ուղղակիորեն կախված կլինի նրանից, թե որքան կկազմեն ընթացիկ ծախսերի ընդհանուր գումարն այդ տարվա վարչական բյուջեում և որքան գումար կմնա կապիտալ ծախսեր կատարելու համար:

2.5 ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐ ԵՎ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Գյուղապետարանի շենքի և համայնքային կենտրոնի բացակայությունը
- Ներհամայնքային ճանապարհների և փողոցների անբարեկարգ վիճակը
- Համայնքում արտաքին (գիշերային) լուսավորության համակարգի բացակայությունը
- Խմելու ջրի ջրամատակարարման ներհամայնքային համակարգի ոչ բավարար վիճակը
- Ջրահեռացման ներհամայնքային կենտրոնացված համակարգի բացակայությունը
- Գազամատակարարման բացակայությունը
- Համայնքի գյուղապետարանի, գրադարանի և դպրոցի շենքերում ջեռուցման համակարգերի բացակայությունը, դրանց գործարկման դժվարությունները ձմռան ընթացքում
- Համայնքում աղբահանության կազմակերպման փոքր մասշտաբը և ցածր մակարդակը
- Ոռոգման ներհամայնքային համակարգի բացակայությունը
- Միջհամայնքային հասարակական տրանսպորտի բացակայությունը՝ ապահովելու մշտական հաղորդակցություն մարզկենտրոնի, տարածաշրջանային կենտրոնի և Թալին քաղաքի հետ
- Համայնքում արտադրված գյուղատնտեսական մթերքներն իրացնելու, մինչև շուկա հասցնելու բազմաբնույթ խնդիրների ու դժվարությունների առկայությունը
- Համայնքում աշխատատեղերի խիստ պակասը, գործազրկության բարձր մակարդակը
- Համայնքում սոցիալապես խոցելի ընտանիքների մեծ քանակը
- Համայնքի գերեզմանատների չցանկապատված լինելը
- **2.6 ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ**
- , Համայնքում միջնակարգ դպրոցի գործելը
- Համայնքում հեռախոսակապի և հեռուստատեսության առկայությունը
- Խմելու ջրի ներհամայնքային համակարգի առկայությունը

3 ՀԱՄԱՅՆՔԻ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Համայնքի գազաֆիկացումը նկատելիորեն կնպաստի համայնքի բնակչության կենցաղային կարիքների բավարարմանը:
- Տարածաշրջանի այլ համայնքների հետ միջհամայնքային համագործակցություն ծավալելու դեպքում հնարավոր կլինի լուծել ընդհանուր աղբավայր ունենալու և շահագործելու հարցը, բոլոր այդ համայնքներում պատշաճ մակարդակով կազմակերպել աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների մատուցումը
- Համայնքային կենտրոնի շենքի կառուցման դեպքում հնարավորություն կստեղծվի՝ համայնքի գյուղապետարանին և գրադարանին ազատելու մշակույթի տան շենքում դրանց կողմից զբաղեցրած տարածքները և տեղափոխվելու նոր շենք՝ ավելի ընդարձակ և հարմարավետ պայմաններով:

ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍՊԱՌՆԱՑՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՎՏԱՆԳՆԵՐԸ

- Խմելու ջրի ջրամատակարարման ներհամայնքային համակարգի մաշվածության պատճառով համայնքում սուր վարակիչ հիվանդությունների առաջացման վտանգը
- Ներհամայնքային փողոցներում և ճանապարհներում ջրահեռացման հեղեղատների բացակայության պատճառով դրանց վիճակի էլ ավելի վատթարացման վտանգը
- Աղբավայրի բացակայության պատճառով համայնքի տարածքում բնության ու շրջակա միջավայրի աղտոտման և վնասման վտանգը
- Համայնքում հողագործությամբ զբաղվելու անհեռանկարայնությունը վտանգում է գյուղատնտեսության այդ ճյուղի զարգացումը
- Համայնքի երիտասարդների արտագաղթը, արտերկրներ աշխատանքի մեկնելը և չվերադառնալը վտանգում է համայնքի կենսագործունեությունը, մասնավորապես՝ միջնակարգ դպրոցի հետագա լիարժեք գործունեությունը

ՀԱՄԱՅՆՔԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

Նպատակների, զարգացման
տեսլականի սահմանում

Գործողությունների
պլանավորում

Անհրաժեշտ ռեսուրսների
հաշվարկ

3.1 ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՏԵՍԼԱԿԱՆ

Համայնքի տեսլականն է՝

Համայնքը դարձնել գյուղատնտեսական և անասնապահական մթերքների արտադրության և վերամշակման տարածաշրջանային կենտրոն, բարեկարգ ու մաքուր, բնակչության համար բավարար կենսապայմաններ ունեցող բնակավայր:

Համայնքի սահմանված տեսլականին հասնելու համար **համայնքի ռազմավարությունն է՝**

- համայնքում անասնապահության զարգացում և անասնապահական մթերքների արտադրության ծավալների աստիճանական մեծացում՝ անասնազլխաքանակի տարեցտարի ավելացման և անհրաժեշտ քանակությամբ անասնակերի ապահովման միջոցով,
- համայնքում կաթի, մսի հանձնման և վերամշակման արտադրամասի ստեղծում և գործարկում
- համայնքի սեփականություն համարվող ենթակառուցվածքների պահպանում, շահագործում, նորոգում և զարգացում,
- ներհամայնքային ճանապարհների և փողոցների նորոգում և բարեկարգում, արտաքին լուսավորության համակարգի անցկացում, ճանապարհային նշանների տեղադրում,
- համայնքի բնակչության սոցիալ – տնտեսական պայմանների բարելավում՝ նրանց մատուցվող հանրային ծառայությունների (ջրամատակարարում և ջրահեռացում, գազամատակարարում, աղբահանություն և սանիտարական մաքրում, տրանսպորտ և

կապ, նախադպրոցական և դպրոցական հանրակրթություն, մշակույթ և սպորտ, սոցիալական պաշտպանություն և այլն) շրջանակի աստիճանական ընդլայնման և որակի անշեղ բարձրացման միջոցով,

- տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության բարելավում՝ համայնքային կենտրոնի ստեղծման և մասնակցության ձևերի զարգացման միջոցով:

3.2 ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՆՄԻՋԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐ

Համայնքի զարգացման 2017-21թթ. հնգամյա ծրագրի **հիմնական նպատակներն են՝**

- տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության ակտիվացում և բարելավում՝ համայնքի ենթակառուցվածքների ընդլայնման և զարգացման միջոցով,
- ներհամայնքային ճանապարհների և փողոցների վիճակի բարելավում և լուսավորում,
- համայնքում գյուղատնտեսության (հողագործության, անասնապահության, այգեգործության) զարգացում՝ տնամերձերի, վարելահողերի, խոտհարքների և արոտավայրերի նպատակային և արդյունավետ օգտագործման միջոցով,
- համայնքի նախադպրոցական կրթության և դաստիարակության պայմանների ընդլայնում (շենքային և գույքային, աշխատակարգի, երեխաների թվի ու սննդի առումներով),
- համայնքի բնակչության կենցաղային պայմանների բարելավում՝ առանձնատների գազաֆիկացման, խմելու և տնտեսական ջրի ջրամատակարարման ներհամայնքային համակարգերի նորոգման և ընդլայնման, աղբահանության ծառայության կազմակերպման ճանապարհով,
- համայնքի դպրոցական հանրակրթության պայմանների բարելավում՝ միջնակարգ դպրոցի շենքի նորոգման, ներքի հարդարման, դռների և պատուհանների փոխարինման և ջեռուցման միջոցով,
- համայնքի բնակչությանը հանրային ծառայությունների մատուցում ամբողջ տարվա ընթացքում՝ համայնքային հիմնական ենթակառուցվածքների (գյուղապետարան, գրադարան, բուժկետ) շենքերի ջեռուցումն ապահովելու միջոցով:

4. ՀՀԶԾՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ

Ոսկերթաս համայնքի ՀՀԶԾ – ում ընդգրկված ծրագրերն նախատեսված է իրականացնել .

1. Համայնքի սեփական միջոցներով.
2. Ներքին պաշտոնական դրամաշնորհներով.
3. Պետություն – համայնք – մասնավոր հատված համագործակցության շրջանակներում մասնավոր ընկերությունների կողմից արված ներդրումներ.
4. Բարեգործություն և նվիրատվություն.
5. Այլ աղբյուրներ.

ՀՀԶԾ – ում ընդգրկված ծրագրերի իրականացման համար առկա և անհրաժեշտ ֆինանսական միջոցները ներկայացված են ՀՀԶԾ ծրագրերի ֆինանսավորման ամփոփաթեթերում:

Համայնքը իր միջոցներով պատրաստ է իրականացնել հետևյալ ծրագրերը.

1. Զոհվածների հուշարձանի կապիտալ նորոգում, որի համար համայնքի ֆոնդային բյուջեից 2017 – 2018 թթ. նախատեսվել է 2000.0,0 հազար դրամ:

2. Գերեզմանների պարիսպների մասամբ վերանորոգման համար 2017 – 2018 թթ. Համայնքի ֆոնդային բյուջեից նախատեսված է 770.7 հազար դրամ:

Պետություն – համայնք – մասնավոր հատված համագործակցության շրջանակներում, այլ ծրագրերով համայնքը նախատեսում է իրականացնել.

- Համայնքապետարանի շենքի և համայնքային կենտրոնի վերանորոգում 5000.0 հազ դրամ, որից համայնքի ներդրում 2000.0
- Ներհամայնքային ճանապարհների և փողոցների կապիտալ վերանորոգում 15500.0 հազ դրամ, որից համայնքի ներդրումը 1000.0
- Համայնքում արտաքին (գիշերային) լուսավորության համակարգի կառուցում-2000.0 հազար դրամ ,որից համայնքի ներդրում 800.0 հազ դրամ
- Խմելու ջրի ջրամատակարարման ներհամայնքային համակարգի բարելավում `2000.0 հազար դրամ ,որից 500.0 հազար դրամ
- Ջրահեռացման ներհամայնքային կենտրոնացված համակարգի կառուցում 2000.0 հազ դրամ,որից 500.0 համայնքի կողմից
- Գազամատակարարման համակարգի կառուցում 20.000 հազ դրամ
- Համայնքի գյուղապետարանի, գրադարանի և դպրոցի շենքերում ջեռուցման համակարգերի կառուցում 2000.0 հազ դրամ, որից համայնքի ներդրումը 500.0 հազ դրամ

- Համայնքում աղբավայրի կառուցում և աղբահանության կազմակերպում 2000.0 հազ դրամ, որից համայնքի ներդրումը 500.0 հազ դրամ
- Ոռոգման ներհամայնքային համակարգի կառուցում 5000.0 հազար դրամ
- Համայնքի գերեզմանատների լրիվ ցանկապատում 2000.0 հազար դրամ

)

5. ՀՀԶԾ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ

ՀՀԶԾ մոնիթորինգի ծրագիրը, մոնիթորինգի ենթարկվող ցուցանիշները, ցուցանիշների հավաքագրման հաճախականությունը, տեղեկատվության աղբյուրներն ամփոփված է ՀՀԶԾ մոնիթորինգի անձնագրում: